ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ԽՈՐՀՐԴԻ) ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք.Երևան 27 դեկտեմբերի 2019թ.

ՀՀ շրջակա միջավայրի նախարար, Խորհրդի նախագահ՝ Է.Գրիգորյանի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ հրավիրվել է Խորհրդի հեռակա քվեարկությամբ անցկացվող արտահերթ նիստ, որի քվեարկությունը սկսվել է 2019 թվականի դեկտեմբերի 25-ին և ավարտվել 2019 թվականի դեկտեմբերի 27-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ս. Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ա. Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ս. Գալյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Ամիրխանյան	Հայաստանի ամերիկյան համալսարան, Յակոբեան բնապահպանական կենտրոնի տնօրեն (համաձայնությամբ)
Գ. Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ)
Պ. Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն (համաձայնությամբ)

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Է. Գրիգորյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Ա. Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ս. Ադամյան	«Բնապահպանական հասարակական միություն» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաստատել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գործունեության 2020 թվականի տարեկան ծրագիրը:

2. Հաստատել Խորհրդի անդամ Ալեն Ամիրխանյանի անդամակցությունը դադարեցնելու մասին դիմումը:

2019թ. դեկտեմբերի 25-ին Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին ուղարկվել է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գործունեության 2020 թվականի տարեկան ծրագիրը, ինչպես նաև Խորհրդի անդամ Ալեն Ամիրխանյանի անդամակցությունը դադարեցնելու մասին դիմումը:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 27-ը Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի էլեկտրոնային հասցեին ստացվել են Խորհրդի 10 անդամներից 7-ի կողմից ուղարկված «կողմ եմ» բառերը:

ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետի համաձայն հեռակա քվեարկությունը համարվում է կայացած:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Խորհրդի անդամ՝ Ա.Ասոյանը տեղեկացրել է, որ նշված հարցը քվերակության դնելու կարիք չկա: Անհրաժեշտ է, Խորհրդի անդամ Ա.Ամիրխանյանի հաստատումը, որ իր դիմումով կազմակերպությունը դադարեցնում է անդամակցությունը Խորհրդին, որից հետո Խորհուրդը որոշում կկայացնի նոր կազմակերպություն ընդգրկելու վերաբերյալ:

Խորհրդի անդամ Ա.Ամիրխանյանը հաստատեց, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի մասնակցության դադարեցումը Խորհրդին:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց՝

1. հաստատել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գործունեության 2020 թվականի տարեկան ծրագիրը՝ 7 կողմ ձայնով:

2. ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի մասնակցությունը կառավարման խորհրդին դադարեցնելու մասին դիմումը ընդունել ի գիտություն:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար **Էրիկ Գրիգորյան**
(խորհրդի նախագահ)

Քարտուղար՝ **Սեդրակ Ղազարյան**